լեալ Քաղաքապետին զճարտարապետան եւ զորմնադիրս եդ 'ի բանտի, և առեալ 1500 դահեկան տուգանս 'ի Հայոց՝ արձակեաց զնոսա, որոյ վասն առաքեցին 'ի Դամասկոս զերկուս հրամանագիրս 'ի Նորոգել, մին վասն Ցորդանանու, և միւսն վասն վերանորոգութեան, (1828 · 'ի 1 Փեաբրվարի)։

Ի հասանիլ թղթոց յԵրուսաղէմ առ Յովհաննէս վարդապետ 'ի Դամասկոս, դարձ արար անտի 'ի Կոստանդինուպոլիս, և ըստ զօրութեան Իլամի Դատաւորին Երուսաղէմի տուաւ հրովարտակ 'ի Դրանէ վճարել բաժնիւ զզարտս Աթոռոյն 'ի միջոցի 8 ամաց · ապա խորհրդով զլխաւորաց ազգին առաքեցաւ Գաբրիէլ Պատրիարք 'ի Զմիւռնի, ժողովել անդ եւ 'ի վիճակս նորա զկամաւոր տուրս ազգին 'ի նպաստ պարտուցն Երուսաղէմի, և նորա հասեալ անդ ձեռնադրեաց զՔահանայս 5 ('ի 20 Յունիսի), և յետ սակաւու սկիզբն արար գործոյն · անտի առաքեաց զվկայականն Զաքարիա վարդապետի լինել Եպիսկոպոս, եւ Ծարագոյն կառավարչի Աթոռոյն Պօղոս Եպիսկոպոսի երթալ յԵրուսաղէմ։ Ապա գրեցին Կարապետ և Պօղոս Պատրիարքունք յորդորական բանիւք առ ամենայն վիճակաւոր Առաջնորդս քաղաքաց, եւ առ նոյն ինքն Եփրեմ Կաթուղիկոս Էջմիածնի խրատել Աւետարանական և հոգեւոր բանիւք զժողովուրդս, եւ հաւաքել յիւրաքանչիւր անձէ զերկուս և զերիս դահեկանս մինչեւ ցուիթն ամ, 'ի նպաստ վճարման պարտուց Աթոռոյն։ Զնոյն գրեալ էին եւ առ Կարնոյ Առաջնորդ Կարապետ Եպիսկոպոսն, յորմէ ընկալան պատասխանի, թէ 'ի գիւղօրայս վիճակի նորին յամենայն տեղիս լցեալ էին Արքունի զօրք, և բընակիչք Կարնոյ քաղաքին առհասարակ թողեալ զամենայն գործս իւրեանց պարապեալ էին 'ի պաշտպանութիւն քաղաքին բրելով խրամ 'ի շրջապատս նորա վասն պատերազմին Օսմանցւոց ընդդէմ Ռուսաց · սակայն խոստանայր 'ի դիպող ժամու հասանել յօգնութիւն Աթոռոյն 'ի սէր Ս · Տեղեաց։

Իսկ յԵրուսաղէմ Խորհրդականք Աթոռոյն կային 'ի մեծի տառապանս, զի Կուսակալն Դամասկոսի դրդեալ 'ի պարտատերաց ստէպ ստէպ գրէր հրամանագիրս առ Քա-